Արձանագրություն N 3
«ՀՀԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ-26/74» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման հանձնաժողովի նիստի

ք. Վարդենիս 22-ը հունիսի 2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝ (ԳԱՊ)
Կարեն Մկրտչյան
Գնահատող անդամներ՝
Ա.Մկրտչյան, Ս.Գրիգորյան Գ. Մնացականյան
հանձնաժողովի քարտուղար՝
Արևիկ Մելքոնյան

1. Մասնակիցների կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի շտկման մասին

1.1. <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ Կառավարության 2017թ. Մայիսի 4 N 526-Ն որոշման 41-րդ և 42-րդ կետերի պահանջներին համապատասխան ԱԼ-ՄԱՔ ՍՊԸ -ն պետք է գնումների համակարգողին 1 աշխատանքային օրվա ընթացքում էլ.փոստի միջոցով ներկայացներ պահանջվող փաստաթղթերը:

ԱԼ-ՄԱՔ ՍՊԸ -ն Օրենքով սահմանված ժամկետում շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները և ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը: Փաստաթղթերն ուսումնասիրելուց հետո **«ՀՀԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ-26/74»** ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերը գնահատել բավարար:

2.Գնման ընթացակարգին բավարար գնահատված մասնակիցների ցուցակը հետևյալն է .

Հ/հ	Մասնակցի անվանումը
1.	«ԱԼ-ՄԱՔ» ՍՊԸ
2	Արամ և Բագրատ ՍՊԸ

3.Գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից ճանաչելու մասին
(Կ.Մկրտչյան)

3.1. Հայտերի գնահատումից հետո **«ՀՀԳՄՎՀ-ԳՀԱՇՁԲ-26/74»** ծածկագրով գնման ընթացակարգի միակ չափաբաժնի համար ընտրված մասնակից է ճանաչվել Արամ և Բագրատ ՍՊԸ-ն՝ որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝0:

4.Անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1. Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օրը:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

(Կ. Մկրտչյան)

ա) Ընտրված մասնակից ճանաչել Արամ և Բագրատ ՍՊԸ- ին՝ որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

բ) "Գնումների մասին,, ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունն ուղարկել հրապարակման:

գ) Ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կնքել ,,Գնումների մասին,, ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

դ) Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման տեքստը:

ե) Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 տոկոսի չափով:

զ) Ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կկնքվի, եթե վերջիններս ներկայացնեն պայմանագրի և որակավորման ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝0:

Գնահատող(ԳԱՊ)		Կ.Մկրտչյան
Գնահատող		Ա.Մկրտչյան
Գնահատող		Ս.Գրիգորյան
Գնահատող		Գ.Մնացականյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Արևիկ Մելքոնյան